առաջինն 500 քսակ, և երկրորդն 750, այժմ զինչ ունիք առնել ասա։ Եւ նոքա ասեն, ոչ այդպէս, զի 'ի կատարիլ գործոյն, յորժամ հանդերձեալ էր Ոսմիկանն դիմել 'ի կողմանս յայսոսիկ, աղաչեցին զնա ծերունիքն փոխ տանել կատարման գործոյն խոստացեալ հաճել ըստ կարեաց զմիտս Կուսակալին, նոյնպէս եւ յերկրորդ նուագի 'ի դիմել նորա յերուսաղէմ սաստիկ հրամանաւ, և 'ի լինել բանից 'ի ժողովի ծերունեաց, թէ զինչ ունիք տալ, եւ նոքա ամենեքեան ետուն պատասխանի թէ՝ ոչ երբէք կասիմք յետս 'ի ծառայութենէ, այլ միայն կատարեսցի գործն և վերջասցի խռովութիւնն։ Եւ 'ի վերջոյ սահմանեցաւ յետ լրանալոյ գործոյն տալ Կուսակալին 400 քսակ, և զոր ինչ յառաջագոյն վասն ձեր խոստացեալ էին։ Իսկ 'ի թախանձել Մէհէմմէտ Պէյին հատուցանել 500 քսակ, ծերունիք չառին յանձն հայեցեալ յաղքատութիւնս իւրեանց, եւ սակարկութիւնն մնաց 'ի մէջ 5—400 քսակաց։ Սակայն այժմ աղաչեմք 'ի կողմանէ ծերունեաց առանց 'ի մէջ բերելոյ զանուն դրամոց, հրամայել ըստ մտաց հրովարտակին կատարել զգործն, յայնժամ ծերունիք եւս 'ի հարկէ ճանաչեն զպարտաւորութիւն իւրեանց, և խոստացեալ գումարն այն՝ լիցի հատուցանել 'ի պայմանեալ ժամանակի փոխանակագրով։ Եւ նորա կոչեալ զՍողոմոն հըրէայ սեղանաւոր Բդեշխին՝ հեղնելով և ծիծաղելով պատմեաց նմա զբանս վարդապետաց, եւ նորա կեղծաւորեալ ասէ՝ վանօրայք պատրաստ են միշտ ծառայել Տէրութեան՝ Կուսակալին և ձեզ։ այս գործ բաղում անգամ խօսակցելոյ պէտս ունի, եւ ոչ միանգամ եւ երկիցս։ Տար ուրեմն ասէ զսոսա համբուրել զքղանցս տեառն իմոյ, և ապա խօսիմք։ Եւ եմոյծ զնոսա յատեան Կուսակալին և մատուցին զզիր Պատրիարքին, եւ նորա ընթերցեալ զայն, եհարց զգործոյն, և նոքա պատմեցին համառօտիւ։ Ընդէ՞ր նըստեալ է ասէ Մուվէլլայն յերուսաղէմ, և նոքա ետուն պատասխանի, ներքին դիտաւորութիւն նորին մեզ անգիտելի է իսկ զոր ինչ լուեալ է մեր 'ի բերանոյ նորին, այս է թէ 'ի ճանապարհորդել նորին՝ Տէրութիւնն պատուիրեալ է նմա, յետ լրանալոյ գործոյն Իլամ առնել եւ սպասել հրամանի, և այժմ գործն մնաց անկատար, նմին իրի ըս-